ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» «_____» 2022 թ. N ____-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N 16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 10-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) ուժը կորցրած ճանաչել որոշման N 1 հավելվածի «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի 3-րդ կետի 6-րդ ենթակետը.

2) որոշման N 1 հավելվածի «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի 1-ին կետը լրացնել նոր 26-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ՝

«26) Սպորտի և երիտասարդության հարցերի վարչություն».

3) ուժը կորցրած ճանաչել որոշման N 2 հավելվածի «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Սպորտի և երիտասարդության հարցերի բաժին» գլուխը.

4) N2 հավելվածի «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժինը լրացնել նոր «Սպորտի և երիտասարդության հարցերի վարչություն» գլխով հետևյալ բովանդակությամբ.

«

	Սպորտի և երիտասարդության հարցերի վարչություն				
1	վարչության պետ	1	697,000		697,000
2	վարչության պետի տեղակալ	2	561,000		1,122,000
3	գլխավոր մասնագետ	4	323,000		1,292,000
4	առաջատար մասնագետ	1	289,000		289,000
5	առաջին կարգի մասնագետ	2	282,200		564,400
6	գործավար	1	248,200		248,200
	ԸՆԴԱՄԵՆԸ	**11**			**4,212,600**

»:

5) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ամբողջը՝ Երևանի քաղաքապետարան» տողում «703.5» և «232,594,800» թվերը փոխարինել համապատասխանաբար «707.5» և «234,696,000» թվերով,

6) «Ամբողջը» տողում «1993.5» և «605,687,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «1997.5» և «607,788,200» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սպորտի, ֆիզիկական կոիլտուրայի և երիտասարդության հարցերի համակարգը միտված է անձի, ընտանիքի և հասարակության մեջ ֆիզիկական դաստիարակությամբ զբաղվելու գաղափարը սերմանելուն, պետական և ազգային մտածողությունն ամրապնդելու գործընթացն ապահովելուն , որն ունի առաջնային նշանակություն, քանի որ այն ուղղված է ֆիզիկապես կոփված, կրթված, հայրենասեր սերնդի ձևավորմանը:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների դերը սահմանված է «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի» մասին օրենքի 11-րդ հոդվածով, ըստ որի՝ տեղական ինքնակառավարման մարմիններն այդ բնագավառում նպաստում են համայնքի տարածքում պետական ծրագրերի իրագործմանը, համայնքների բնակչության շրջանում ֆիզկուլտուրային-առողջարարական և մարզական միջոցառումների կազմակերպմանը և այլն:

Երևան քաղաքի ավագանու 29.10.2018 թվականի թիվ 10-Ա որոշմամբ հաստատված հաստիքացուցակի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է հանդիսանում սպորտի և երիտասարդության հարցերի բաժինը, որի հաստիքների ընդհանուր թիվը կազմում է 7 (բաժնի պետ-1, գլխավոր մասնագետ-1, առաջատար մասնագետ-2, առաջին կարգի մասնագետ-3): Բաժինը նշված կազմով, իր կանոնադրությանը համապատասխան նպաստում է այն խնդիրների իրագործմանը, որոնք բխում են ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառում իրավական ակտերով Երևանի քաղաքապետին վերապահված լիազորություններից:

Կարևորելով տվյալ ոլորտի դերն ու նշանակությունը, նախատեսվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքում նույնպես բարձրացնել սպորտի և երիտասարդության հարցերի ստորաբաժանման դերը, որը նախատեսվում է կատարել բաժնին վարչության կարգավիճակ տալու միջոցով՝ հաստիքների ընդհանուր թիվը սահմանելով 11, այն է՝ վարչության պետ, 2 վարչության պետի տեղակալ, 4 գլխավոր մասնագետ, 1 առաջատար մասնագետ, 2 առաջին կարգի մասնագետ և մեկ գործավար:

Բաժնի գործառույթների մեջ է մտնում համաքաղաքային հանրային, առողջարարական, մարզական և երիտասարդական միջոցառումների, ինչպես նաև ՀՀ պետական և ազգային տոների և հիշատակի օրերի հետ կապված՝ հանրային միջոցառումների կազմակերպումը, Երևան քաղաքում մարզական և երիտասարդական քաղաքականության մշակման, համատեղ ծրագրերի իրագործման ներդաշնակ և օրենսդրական պահանջներին համապատասխանող գործունեության ապահովում և այլն: Հարկ է նշել, որ Երևանի ենթակայությամբ գործում է նաև «Երևան սպորտ կոմիտե» ՀՈԱԿ-ը, որի գործունեության հիմնական առարկան է Երևան քաղաքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զանգվածայնացումն ու զարգացումը, ազգաբնակչության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորումն ու տարածումը, Երևան քաղաքում մարզական միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը: Կազմակերպության հաստիքների ընդհանուր թիվը 16 է և կազմակերպությունն ըստ ըստ էության աշխատողների նշված թվաքանակով իրականացնում է գրեթե միևնույն գործառույթը, ինչ իրականացնում է աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժինը՝ 7 հաստիքով: Ստացվում է, որ ընդհանուր թվով 23 աշխատակիցներ, մի դեպքում՝ բաժնի, մյուս դեպքում՝ կազմակերպության հաստիքներով, իրականացնում են համանման գործառույթներ:

Նշված ոլորտի գործունեության և կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նախատեսվում է լուծարել «Երևանի սպորտ կոմիտե» ՀՈԱԿ-ը և այդ աշխատանքներն իրականացնել նոր ձևավորվող սպորտի և երիտասարդության հարցերի վարչության ավելի նվազ՝ 11 աշխատողների քանակով, ընդ որում, հաստիքներից 3-ի ավելացումը պայմանավորված է սպորտի և ֆիզիկական դաստիարակության զարգացման հայեցակարգերի մշակման, ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման և հեռանկարային զարգազման կանոնակարգերի մշակման գործառույթների ապահովման հանգամանքով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում ծախսերի էական փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ